ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

| | | | |
|---|---|---|---|
| *Համարը* | N 311-Ն | *Տեսակը* | Ինկորպորացիա |
| *Տիպը* | Հրաման | *Կարգավիճակը* | Գործում է |
| *Սկզբնաղբյուրը* | ՀՀԳՏ 2015.04.01/8(520) Հոդ.76 | *Ընդունման վայրը* | Երևան |
| *Ընդունող մարմինը* | Էկոնոմիկայի նախարար | *Ընդունման ամսաթիվը* | 06.03.2015 |
| *Ստորագրող մարմինը* | Էկոնոմիկայի նախարար | *Ստորագրման ամսաթիվը* | 06.03.2015 |
| *Վավերացնող մարմինը* | | *Վավերացման ամսաթիվը* | |
| *Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* | 11.04.2015 | *Ուժը կորցնելու ամսաթիվը* | |

Կապեր այլ փաստաթղթերի հետ
Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎՃԱՐՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՉԱՓԸ ԵՎ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***«Գրանցված է»***
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
*19 մարտի 2015 թ.*
*Պետական գրանցման թիվ 10315091*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

**6 մարտի 2015 թ.** **N 311-Ն**
**ք. Երևան**

# Հ Ր Ա Մ Ա Ն

## ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎՃԱՐՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՉԱՓԸ ԵՎ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***(վերնագիրը փոփ. 25.12.24 N 3064-Ն)***

Ղեկավարվելով «Հավատարմագրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 5.1 կետով.

***Հրամայում եմ՝***

1. Հաստատել հավատարմագրման ազգային մարմնի և համապատասխանության գնահատման մարմնի միջև կնքված պայմանագրի հիման վրա հավատարմագրման ազգային մարմնի կողմից կատարված հավատարմագրման ծառայությունների, գնահատումների համար համապատասխանության գնահատման մարմնի կողմից իրականացվող վճարման, ինչպես նաև համապատասխանության գնահատման մարմնի տարեկան վճարի վճարման չափը և կարգը՝ համաձայն հավելվածի:

***(1-ին կետը փոփ. 25.12.24 N 3064-Ն)***

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Նարեկ Տերյանին:

***(2-րդ կետը փոփ. 28.12.22 N 2110-Ն)***

**Կ. Ճշմարիտյան**

**Հավելված**
**ՀՀ էկոնոմիկայի նախարարի**
**2015 թվականի մարտի 6-ի**
**N 311-Ն հրամանի**

## ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎՃԱՐՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՉԱՓԸ ԵՎ ԿԱՐԳԸ

***(վերնագիրը խմբ. 25.12.24 N 3064-Ն)***

### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են համապատասխանության գնահատման մարմինների (այսուհետ՝ ՀԳՄ) կողմից «Հավատարմագրման ազգային մարմին» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (այսուհետ՝ ԱՐՄՆԱԲ) կատարած ծառայությունների, գնահատումների համար վճարների և տարեկան վճարների վճարումների հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգում կիրառվող հասկացություններն ունեն «Հավատարմագրման մասին» օրենքով, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի ապրիլի 2-ի N 915-Ն հրամանով և ԻՍՕ/ԻԷԿ 17000 շարքի ստանդարտներով սահմանված նշանակությունը:

3. Նոր (ազգային, միջազգային, տարածաշրջանային, այլ պետության ստանդարտով (միջպետական, եվրոպական) կամ իրավական ակտով չսահմանված) համապատասխանության գնահատման սխեմայի (այսուհետ՝ ՀԳՍ) սեփականատեր հանդիսացող կամ կիրառող ՀԳՄ-ն տվյալ ՀԳՍ-ն հավատարմագրման ոլորտում ներառելու համար նախքան հավատարմագրման կամ հավատարմագրման ընդլայնման դիմելը ՀԳՍ-ի վերլուծության և պիտանիության գնահատման նպատակով դիմում է ԱՐՄՆԱԲ՝ համաձայն ԱՐՄՆԱԲ-ի կողմից հաստատված ընթացակարգի:

4. Հավատարմագրման, ՀԳՍ-ի վերլուծության և պիտանիության գնահատման աշխատանքների համար վճարումը կատարում է հավատարմագրմանը հավակնող իրավաբանական անձը՝ անկախ հավատարմագրման և ՀԳՍ-ի գնահատման արդյունքներից:

5. Իրավաբանական անձը տարեկան վճարը կատարում է իր կազմում գործող յուրաքանչյուր հավատարմագրված ՀԳՄ-ի համար:

6. Սույն կարգով հաշվարկվող հավատարմագրման, գնահատման աշխատանքների իրականացման, ՀԳՍ-ի վերլուծության և պիտանության գնահատման համար վճարը (այսուհետ՝ գնահատման աշխատանքների գին) չի ներառում գործուղման և տրանսպորտային ծախսերը: Գործուղման և տրանսպորտային ծախսերը կատարվում են ՀԳՄ-ի կողմից:

### 2. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ

7. Գնահատման աշխատանքների գինը որոշվում է հայտի գրանցումից հետո հետևյալ բանաձևով.

**P = A + T, որտեղ՝**

**P** - ՀԳՄ-ի գնահատման աշխատանքների արժեքն է,

**A** – հավատարմագրման կամ ՀԳՍ-ի վերլուծության և պիտանիության գնահատման գործընթացի ապահովման

արժեքն է,

**T** - գնահատման գործընթացի աշխատատարությունն է, որն իր մեջ ներառում է գնահատումները՝ հաշվարկված մարդ/օր-ով:

**T= C x Q, որտեղ՝**

**C** – հավատարմագրման փորձագետի (գնահատողի)/տեխնիկական փորձագետի միջին օրական դրույքաչափն է, որը կազմում է նվազագույն աշխատավարձի տասներկուապատիկի և ութնապատիկի չափը՝ համապատասխանաբար 12000 դրամ (հավատարմագրման փորձագետի (գնահատողի) դեպքում), 8000 դրամ (տեխնիկական փորձագետի դեպքում), ներառյալ հարկերը, տուրքերը, վճարները,

**Q** – գործընթացի իրականացման համար անհրաժեշտ օրերի քանակն է, որը հաշվարկվում է ԱՐՄՆԱԲ-ի կողմից հաստատված կարգով:

8. ՀԳՄ-ների հավատարմագրման (այդ թվում՝ ընդլայնման), վերահավատարմագրման աշխատանքների վճարման արժեքները ներկայացված են N 1 և N 2 աղյուսակներում՝

**N 1 աղյուսակ**

| հ/հ | Անվանումը | Արժեքը (հազար դրամ) |
|---|---|---|
| 1 | Հավատարմագրման գործընթացի ապահովում (փաստաթղթերի փորձաքննության մասով)՝ | |
| 1.1 | փորձարկման լաբորատորիա, արտադրանքի, գործընթացի և ծառայությունների սերտիֆիկացման մարմին, կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմին | 400.0 +S |
| 1.2 | ֆիզիկական անձանց սերտիֆիկացման մարմին, հսկողություն (այդ թվում՝ ստուգաչափում) իրականացնող մարմին, համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող համապատասխանության գնահատման այլ մարմիններ | 500.0 |
| 1.3 | տրամաչափարկման լաբորատորիա | 300.0+S |
| 2 | Հավատարմագրման գործընթացի ապահովում (տեղում գնահատման մասով) | |
| 2.1 | փորձարկման լաբորատորիա, արտադրանքի, գործընթացի և ծառայությունների սերտիֆիկացման մարմին, կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմին | 350.0 |
| 2.2 | ֆիզիկական անձանց սերտիֆիկացման մարմին, հսկողություն (այդ թվում՝ ստուգաչափում) իրականացնող մարմին, համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող համապատասխանության գնահատման այլ մարմիններ | 400.0 |
| 2.3 | տրամաչափարկման լաբորատորիա | 200.0 |

որտեղ S-ը՝

1) փորձարկման լաբորատորիաների և արտադրանքի սերտիֆիկացման մարմինների դեպքում՝ ըստ Եվրասիական տնտեսական միության Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի (այսուհետ՝ ԱՏԳ ԱԱ) ապրանքային խմբերի (երկնիշ ծածկագրի) քանակն է, ընդ որում 1-ից 5 ապրանքային խմբի համար սահմանվում է 100 հազար դրամ վճար, 5-ից ավել յուրաքանչյուր ապրանքային խմբի համար՝ հավելյալ 10 հազար դրամ վճար: ԱՏԳ ԱԱ ծածկագրի բացակայության դեպքում յուրաքանչյուր արտադրանքի անվանման համար հաշվարկվում է 10 հազար դրամ՝

2) տրամաչափարկման լաբորատորիաների դեպքում՝ չափվող մեծության արժեքների (այսուհետ՝ չափման մեծություն) քանակն է, ընդ որում 1-ից 5 չափման մեծության համար սահմանվում է 100 հազար դրամ վճար, 5-ից ավելի յուրաքանչյուրի չափման մեծության համար՝ հավելյալ 10 հազար դրամ վճար.

3) կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմինների դեպքում՝ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչով (այսուհետ՝ ՏԳՏԴ) տնտեսության հիմնարար ճյուղերի համար առանձնացված ամփոփիչ խմբավորումների քանակն է՝ նշված լատինական տառերով: ՏԳՏԴ դասակարգչի 1-ից 5 խմբավորումների համար սահմանվում է 100 հազար դրամ վճար, 5-ից ավելի յուրաքանչյուր խմբավորման համար՝ հավելյալ 10 հազար դրամ վճար: ՏԳՏԴ-ով սահմանված տնտեսության հիմնարար ճյուղերի համար առանձնացված ամփոփիչ խմբավորումների բացակայության դեպքում յուրաքանչյուր խմբավորման համար հաշվարկվում է հավելյալ 10 հազար դրամ վճար:

**N 2 աղյուսակ**

| **հ/հ** | **Անվանումը** | **Հավատարմագրման փորձագետի (գնահատողի)/ տեխնիկական փորձագետի միջին օրական դրույքաչափը (հազար դրամ)** |
|---|---|---|

| | | |
|---|---|---|
| 1 | Նախնական այց (առաջին հավատարմագրման դեպքում) | 12.0/8.0 |
| 2 | Փաստաթղթերի փորձաքննություն | 12.0/8.0 |
| 3 | Փաստաթղթերի լրացուցիչ փորձաքննություն | 12.0/8.0 |
| 4 | ՀԳՄ-ի գնահատման պլանի կազմում, տեղում գնահատում, գործունեության հետևում | 12.0/8.0 |
| 5 | ՀԳՄ-ի լրացուցիչ գնահատում | 12.0/8.0 |
| 6 | Հավատարմագրման վերաբերյալ համապատասխան որոշման ընդունում | 12.0/8.0 |

9. NN 3 և 4 աղյուսակներում ներկայացված են հավատարմագրված յուրաքանչյուր ՀԳՄ հավատարմագրման վկայագրի վավերականության ընթացքում իրականացվող վճարումների արժեքները:

**N 3 աղյուսակ**

| **h/h** | **Անվանումը** | **Արժեքը (հազար դրամ)** |
|---|---|---|
| | Տարեկան վճար | |
| 1.1 | փորձարկման լաբորատորիա, արտադրանքի, գործընթացի և ծառայությունների սերտիֆիկացման մարմին, կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմին | 750.0+S |
| 1.2 | ֆիզիկական անձանց սերտիֆիկացման մարմին, հսկողություն (այդ թվում՝ ստուգաչափում) իրականացնող մարմին, համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող համապատասխանության գնահատման այլ մարմիններ | 900.0 |
| 1.3 | Տրամաչափարկման լաբորատորիա | 500.0+S |

**N 4 աղյուսակ**

| **h/h** | **Անվանումը** | **Հավատարմագրման փորձագետի (գնահատողի)/ տեխնիկական փորձագետի միջին օրական դրույքաչափը (հազար դրամ)** |
|---|---|---|
| 1 | Պարբերական գնահատում | 12.0/8.0 |
| 2 | Արտահերթ գնահատում | 12.0/8.0 |
| 3 | ՀԳՄ-ի գործունեության հետևում | 12.0/8.0 |
| 4 | ՀԳՄ-ի լրացուցիչ գնահատում | 12.0/8.0 |
| 5 | Պարբերական և արտահերթ գնահատումների արդյունքում համապատասխան որոշման ընդունում | 12.0/8.0 |

10l ՀԳՄ-ի վերլուծություն և պիտանիության գնահատման աշխատանքների վճարումը կատարվում է NN 5 և 6 աղյուսակներում նշված աշխատանքների վճարման արժեքներին համապատասխան:

**N 5 աղյուսակ**

| **h/h** | **Անվանումը** | **Արժեքը (հազար դրամ)** |
|---|---|---|
| 1. | ՀԳՄ-ի վերլուծություն և պիտանիության գնահատման գործընթացի ապահովում | 200.0 |

**N 6 աղյուսակ**

| հ/հ | Անվանումը | Հավատարմագրման փորձագետի (գնահատողի)/ տեխնիկական փորձագետի միջին օրական դրույքաչափը (հազար դրամ) |
|---|---|---|
| 1. | ՀԳՄ-ի վերլուծություն | 12.0/8.0 |
| 2. | Անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում՝ ՀԳՄ-ի կողմից լրամշակված ՀԳՄ-ի վերլուծություն | 12.0/8.0 |
| 3. | ՀԳՄ-ի վերաբերյալ որոշման ընդունում | 12.0/8.0 |

11. NN 1-6 աղյուսակներով սահմանված վճարումները ՀԳՄ-ն պետք է կատարի համաձայն ներկայացված հաշվի: Վճարման կարգն ու պայմանները նախատեսվում են ՀԳՄ-ի և ԱՐՄՆԱԲ-ի միջև կնքվող համապատասխան պայմանագրերով (այսուհետ՝ պայմանագիր): Գնահատման աշխատանքներն ըստ N 2, N 4 և N 6 աղյուսակների համարվում են կատարված՝ ԱՐՄՆԱԲ-ի կողմից ներկայացված կատարողական ակտի և հարկային հաշվի ներկայացման պահից:

12. Գնահատման գործընթացի ժամանակ ՀԳՄ-ի կողմից արդեն իսկ կատարված գնահատման աշխատանքների համար գանձված գումարը ենթակա չէ վերադարձման, բացառությամբ հավատարմագրման գործընթացի կամ ՀԳՄ-ի վերլուծության և գնահատման ապահովման համար կատարված վճարի այն դեպքի, երբ գնահատման խմբի կազմը դեռևս չի հաստատվել:

13. Գնահատման ընթացքում օտարերկրյա գնահատող (փորձագետ) ներգրավելիս օտարերկրյա գնահատողի (փորձագետի) 1 մարդ/օր-ի արժեքը և թարգմանչի ներգրավման անհրաժեշտության դեպքում, այդ ծախսը կատարվում է ՀԳՄ-ի կողմից՝ համաձայն պայմանագրին կից լրացուցիչ համաձայնագրի:

14. Հավատարմագրման ընդլայնման դեպքում գնահատման աշխատանքների գինը կազմում է սույն կետի 1-3-րդ կամ 4-5-րդ ենթակետերում նշված արժեքների հանրագումարը.

1) N 1 աղյուսակի 1.1-ին և 2.1-ին կամ 1.3-րդ և 2.3-րդ կետերում նշված արժեքների հանրագումարի 50 %-ը՝ համաձայն ՀԳՄ-ի գործող հավատարմագրման ոլորտի.

2) S-ի արժեքը՝ հաշվարկված սույն կարգի 8-րդ կետի համաձայն.

3) գնահատման գործընթացի աշխատատարությունը.

4) N 1 աղյուսակի 1.2-րդ և 2.2-րդ կետերում նշված արժեքների հանրագումարի 50 %-ը.

5) գնահատման գործընթացի աշխատատարությունը:

15. Այն դեպքում, երբ հավատարմագրման ընդլայնման գործընթացը համատեղվում է ՀԳՄ-ի պարբերական գնահատման հետ, աշխատանքների գինը հաշվարկվում է համաձայն 14-րդ կետի:

16. Պայմանագրով սահմանված հավատարմագրման պայմանների փոփոխության առկայության դեպքում արտահերթ գնահատման ծախսերը վճարվում են ՀԳՄ-ի կողմից:

17. Համաձայն «Հավատարմագրման մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ հավատարմագրված ՀԳՄ-ները հավատարմագրման վկայագրի գրանցումից հետո հավատարմագրման վկայագրի գործողության ժամկետում յուրաքանչյուր տարվա համար պետք է վճարեն տարեկան վճար՝ համաձայն N 3 աղյուսակի:

18. Հավատարմագրված ՀԳՄ-ն տարեկան վճարի վճարումն իրականացնում է չորս հավասար մասերով՝ եռամսյա պարբերականությամբ: Յուրաքանչյուր եռամսյակի համար հարկային հաշիվը ԱՐՄՆԱԲ-ի կողմից ներկայացվում է եռամսյակի վերջին ամսվա առաջին տասնօրյակում: Յուրաքանչյուր վճարումն իրականացվում է ԱՐՄՆԱԲ-ի կողմից հարկային հաշիվ ներկայացնելուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարված գումարը ենթակա չէ վերադարձման:

19. ՀԳՄ-ի հավատարմագրման ընդլայնման, կրճատման, կասեցման վերաբերյալ որոշման ընդունման դեպքում հաջորդող եռամսյակի համար 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում ԱՐՄՆԱԲ-ի կողմից իրականացվում է տարեկան վճարի վերահաշվարկ:

20. Վերահավատարմագրման դեպքում ԱՐՄՆԱԲ-ի կողմից իրականացվում է տարեկան վճարի վերահաշվարկ, եթե հավատարմագրման որոշումը կայացվել է մինչև ՀԳՄ-ի հավատարմագրման վկայագրի գործողության ժամկետի ավարտը:

***(հավելվածը խմբ., լրաց., փոփ. 26.11.20 N 1470-Ն, խմբ. 28.12.22 N 2110-Ն, 25.12.24 N 3064-Ն)***